

ՀՀ-ՈՒՄ ՄԻԱԿ-ՈՎ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՀՌՎ ԴԵՂԵՐԻ
ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՈՐԻԹՅՈՒՆ

Սույն զեկույցը մշակվել է «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության կողմից:

Չի թույլատրվում օգտագործել, թարգմանել և տարածել զեկույցն առանց համապատասխան հղումների:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ
+374 98 66 33 83 www.realwrp.org

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2003 թվականին մի խումբ բժիշկների և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից՝ ՄԻԱՎ-ով ապրող անձանց կյանքի որակը բարելավելու նպատակով: Այն Հայաստանում առաջինն է, որը ստեղծվել և ղեկավարվում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ակտիվ մասնակցությամբ:

Կազմակերպությունն իր հիմնադրման օրվանից նախաձեռնել և իրականացրել է տարբեր միջոցառումներ և ծրագրեր՝ բարելավելու ՄԻԱՎ-ով ապրող անձանց կյանքի որակը, բարձրացնելու ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը, բարձրաձայնելու ՄԻԱՎ-ով ապրող անձնանց հիմնախնդիրները, վերացնելու խարանը և խտրականությունը ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ:

Ժամանակի ընթացքում Կազմակերպությունն ընդլայնել է իր գործունեության ոլորտները՝ ներառելով պալիատիվ բժշկական օգնության, ցավային համախտանիշի կառավարման և ԹՆՕ-ների շրջանում վնասի նվազեցման ոլորտները: Կազմակերպությունն այժմ իրականացվող ծրագրերի և միջոցառումների միջոցով նպաստում է ՄԻԱՎ-ով ապրող անձանց, պալիատիվ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց, թմրամիջոցներ օգտագործողների, բնակչության խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը՝ ապահովելով առանց խտրականության, արժանապատիվ ապրելու, սոցիալ-հոգեբանական և բժշկական ծառայություններից օգտվելու նրանց իրավունքը:

Կազմակերպության շահառուներին են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, թմրամիջոց գործածող մարդիկ և պալիատիվ բժշկական օգնության կարիք ունեցող մարդիկ:

Կազմակերպությունն ակտիվ ջատագովություն է իրականացնում խտրականացնող օրենքների և պրակտիկաների փոփոխության և վերացման ուղղությամբ:

Կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունները նախատեսված են ինչպես նոր անտրոջում ստացած, այնպես էլ՝ իրենց ՄԻԱՎ կարգավիճակն իմացող մարդկանց համար:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ԻԱԻՄ ՍՀԿ-ի կողմից տրամադրվող ծառայություններն են՝

- Հավասարը հավասարին խորհրդատվություն - խորհրդատուն ՄԻԱՎ-ով ապրող մարդ է, որը կհսում է իր փորձը՝ կապված ՄԻԱՎ-ով լիարժեք ապրելու, ՀՌՎ դեղեր ընդունելու, հղիություն պլանավորելու և այլնի հետ,
- Ինքնօգնության և փոխօգնության խմբեր, որտեղ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ կհսում են իրենց փորձը, աջակցում միմյանց,
- Հոգեբանական անհատական խորհրդատվություն, երկարատև թերապևտիկ աշխատանք, խմբային աշխատանք, աշխատանք ընտանիքի հետ,
- Սոցիալական աջակցություն - սոցիալական աշխատողն արձագանքում է խտրականության դեպքերին, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է ուղեկցում, աջակցում այցելել ԻՀԱԿ, ուղղորդում համապատասխան կառույցներ, միջամտում պետական կառույց-շահառու, շահառու-ընտանիք հարաբերություններում, աջակցում է դիմումներ կազմել պետության կողմից տրամադրվող տարբեր աջակցությունների համար (թոշակ, նպաստ, հաշմանդամության կարգ և այլն)
- Իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն - իրավաբանն աջակցում է կազմել դիմում/բողքեր, պաշտպանել և վերականգնել խախտված իրավունքները,
- Անվճար պահպանակի տրամադրում
- ՀՌՎ դեղերի փոխանցում ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս՝ համապատասխան լիազորագրի առկայության դեպքում:

Կազմակերպության կողմից իրականացվող ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք և աջակցություն ծրագրի շրջանակներում ԻԱԻՄ ՀԿ-ն իրականացնում է նաև դեղերի փոխանցման ծառայություն: Դեղերի փոխանցում կազմակերպվում է ինչպես ՀՀ ողջ տարածքում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս: Դեղերի փոխանցման ծառայությունը գործում է բացառապես բոլոր այն դեպքերում, երբ շահառուն ունի որոշակի դժվարություններ և ֆիզիկապես չի կարող ներկայանալ ԻՀԱԿ և ստանալ դեղերի հերթական խմբաքանակը և նախապես կազմակերպության աշխատակիցների անունով թողել է լիազորագիր:

Բոլոր ծառայությունները տրամադրվում են բազմամասնագիտական թիմի կողմից՝ անվճար հիմունքներով:

ՄԻԱՎ և ՁԻԱՀ-ի իրավիճակը ՀՀ-ում և աշխարհում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջ աշխարհում ՄԻԱՎ-ով ապրող անձանց թիվը կազմում է 39 միլիոն մարդ¹, որոնցից միայն 76% հասանելիություն ունեն և ստանում են ՀՌՎ դեղամիջոցներ:

ՄԻԱՎ վարակի առաջին դեպքը ՀՀ-ում գրանցվել է 1988թ.: Մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի **5614** դեպք:

ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ **3909** մարդ (**69,6%**), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի **1705** դեպք (**30,4%**):

ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող քաղաքացիների **48,9%**-ը ախտորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում: 0-14 տարեկան երեխաների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի **84** դեպք (**1.5%**):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրողների թիվը կազմում է **4428**, բուժում են ստանում 3398 ՀՀ քաղաքացի²:

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի բուժումն իրականացվում է 2005 թվականից համաձայն Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույցի³:

Հիմնախնդիր

ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ հարցերի ծրագիրը մինչև 2025 թվականը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման համար սահմանել է 95-95-95 թիրախները: Այն

¹ <https://www.who.int/data/gho/data/themes/hiv-aids/hiv-aids>

² [Վիճակագրություն և հաշվետվություններ - NCID](#)

³

<https://ncid.am/%d5%b8%d6%82%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82%d5%b5%d6%81%d5%b6%d5%a5%d6%80/>

ենթադրում է, որ ՄԻԱՎ-ով ապրող անձանց 95%-ը մինչև 2023 թվականը պետք է իմանա իր ՄԻԱՎ կարգավիճակի մասին, ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձանց 95%-ը պետք է կցված լինի ՀՌՎ բուժմանը, իսկ բուժման մեջ գտնվող անձանց 95%-ի մոտ պետք է վիրուսային ծանրաբեռնվածությունը անհայտնաբերելի մակարդակի լինի⁴:

Հայաստանի Հանրապետությունը ևս հանձնառություն ունի հասնելու այս թիրախներին, ինչն արտացոլում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի թիրախներին հասնելուն համար առանցքային բաղադրիչ է համարվում «ՄԻԱՎ-ով ապրող անձանց ինամք և աջակցություն» ծրագիրը, որն իրականացնում է Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ-ն:

«ՄԻԱՎ-ով ապրող անձանց ինամք և աջակցություն» ծրագրի աշխատանքների ընթացքում միշտ եղել են դեպքեր, երբ ՄԻԱՎ-ով ապրող անձինք անկանոն են խմել ՀՌՎ դեղերը կամ ունեցել են բուժման դադարներ: ԻԱԻՄ բազմամասնագիտական թիմի անդամները իրենց աշխատանքում առաջնահերթ են համարում դեղերի դադար ունեցող շահառուների հետ աշխատանքը՝ նպատակ ունենալով բուժման վերսկսումը: Սակայն առավել արդյունավետ աշխատելու և աշխատանքային մոտեցումներ մշակելու համար կարևոր է նախևառաջ բացահայտել ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում ՀՌՎ բուժման դադարների հաճախ հանդիպող պատճառները:

Այդ նպատակով ԻԱԻՄ ՀԿ-ի կողմից 2023թ.-ին իրականացվել է ուսումնասիրություն ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում ՀՌՎ բուժման ընդհատման պատճառների վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցել են ինֆեկցիոն Հիվանդությունների Ազգային կենտրոնի բժիշկների կողմից բուժումը ընդհատած ՄԻԱՎ-ով ապրող շահառուները, ԻԱԻՄ ՀԿ-ի կայքում անանուն հարցաթերթը լրացրած անձինք և ԻԱԻՄ ՀԿ-ի աշխատակիցների կողմից բացահայտված դեղի դադար ունեցող շահառուները:


Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում ՀՌՎ բուժման դադարների առավել հաճախ հանդիպող

⁴ [2025 AIDS TARGETS - UNAIDS](#)

պատճառները: Հետազոտությունը իրականացվել է կիսասաճնայնացված հարցաթերթիկային հարցման միջոցով: Հարցմանը մասնակցած 208 ՄԻԱԿ-ով ապրող մարդկանց մեջ, ըստ սեռային, բաշխվածության, որտեղ արական սեռի ներկայացուցիչները կազմել են 55.2% (115 հարցվող), իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ 44.8% (93 հարցվող):


(Տե՛ս աղյուսակ 1-ում)

Աղյուսակ 1



Հարցվողները եղել են ՀՀ տարբեր մարզերից: Աղյուսակ 2-ում ներկայացված է մարզային բաշխվածությունը՝


Աղյուսակ 2



Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ հարցման մասնակիցների 21.6%-ը բուժման դադար է ունեցել մինչև մեկ ամիս, հարցվողների մեծամասնությունը՝ 66.8%-ը ՀՌՎ բուժման դադար է ունեցել մեկ ամսից ավելի, սակայն ոչ ավել քան 12 ամիսը, իսկ 11.6%-ը՝ մեկ տարուց ավելի, մինչև 8-9 տարի:

Աղյուսյակ 3-ում ներկայացված է բուժման դադարի տևողությունը՝

Աղյուսակ 3



ՀՌՎ բուժման դադարի պատճառները

Ուսումնասիրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել այն գործոնները, որոնց պատճառով ՄԻԱՎ-ով ապրող անձինք առավել հաճախ ունենում են դեղերի ընդունման դադարներ:

- Հարցվողների 22.5 %-ը (47 անձ), որպես դեղերի դադարի պատճառ նշել է, որ հավատում է, որ ունի ՄԻԱՎ վարակ, սակայն, քանի որ ինքն իրեն լավ է զգում, չի ուզում ամեն օր դեղորայք ընդունել:
- Հարցվողների 11%-ը (23 անձ) նշել է, որ չի հավատում, որ ինքն ունի ՄԻԱՎ վարակ, իսկ 3.3%-ը (7 անձ) առհասարակ չի հավատում, որ գոյություն ունի ՄԻԱՎ վարակ հիվանդություն:
- Հարցվողների 4,8%-ը (10 անձ) նշել է, որ չի ընդունում ՀՌՎ դեղերը, որպեսզի չհիշի իր ՄԻԱՎ կարգավիճակի մասին:
- Դեղերի դադարի պատճառներից մեկն էլ այն է, որ հարցվողների ընտանիքի անդամները չգիտեն վերջիններիս կարգավիճակի մասին, և գաղտնիության պահպանման համար խուսափում են դեղեր պահել իրենց մոտ: Հարցվողներից մեկն էլ նշել է, որ ամուսինը չի հավատում ՄԻԱՎ-ի գոյությանը և իրեն արգելում է ստանալ բուժում: Եղել են նաև դեպքեր, երբ հարցվողը նշել է, որ տարբեր կենցաղային պատճառներով պայմանանվորված չի խմել դեղերը՝ աշխատանք, երեխաների հիվանդ

լինելը, միջոցառման մասնակցելը: Եղել են նաև դեպքեր, երբ անձը չի խմել դեղերը, քանի որ գտնվել է դեպրեսիայի մեջ, կորցրել է հարազատ մարդու:

- Դեղերի դադարներ ունենալու մյուս հանդիպող պատճառներից են՝ դեղերի կողմնակի ազդեցությունները, որոնց մասին նշել են հարցվողներից 32-ը: Վերջիններիս մոտ դեղերի կողմնակի ազդեցությունները դրսևորվել են հետևյալ կերպ՝
 - սրտխառնոց, փսխում,
 - գլխապտույտներ,
 - հոդացավեր,
 - քնկոտություն,
 - ցավեր որովայնի հատվածում,
 - ցանավորում և այտուցվածություն:

Հարցաթերթում անդրադարձ է կատարվել նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության դեպքերին, հասկանալու համար, թե ինչպես կարող է այն ազդել դեղերի կարգապահ ընդունման վրա: Հարցը հնչել է հետևյալ կերպ. ՀՌՎ բուժման դադարն արդյո՞ք պայմանավորված է բժշկական հաստատությունում խտրական վերաբերմունքով: Հարցվողներից միայն 2-ն են նշել այդ հանգամանքը, մեկնաբանելով, որ խորհրդատվությունը լիարժեք չի տրամադրվել բժշկի կողմից, ցուցաբերվել է անհետևողական, կոպիտ և անտարբեր վերաբերմունք:


Դեղերի անհասանելիության խնդրի մասին խոսել են հիմնականում այն շահառուները, որոնք գտնվել են արտերկրում կամ ԼՂՀ-ում և չեն կարողացել գալ ստանալ իրենց դեղորայքը, կամ չեն իմացել, թե իրենց բնակության երկրում որտեղ դիմել ՀՌՎ բուժում ստանալու համար:

Հարցվողների շրջանում եղել են մարդիկ, որոնք ունեցել են մտավախություն հՀԱՎ-ի բժիշկների կամ այլ հաստատության աշխատակիցների կողմից (օրինակ՝ ՔԿՀ) գաղտնիության պահպանման հետ կապված, որն ազդել է դեղերի կարգապահ ընդունման վրա:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է նաև, թե հարցվողներից քանիսն են վերսկսել իրենց ՀՌՎ բուժումը: Արդյունքում 161 հարցվող՝ 77.4%-ը նշել է, որ վերսկսել է իր ՀՌՎ բուժումը: Ուսումնասիրվել են նաև այն գործոնները, որոնք ազդեցություն են ունեցել ՀՌՎ բուժման վերսկսման վրա: Հարցվողների 48%-ը (100 անձ) նշել է, որ ՀՌՎ բուժումը վերսկսել է ԻԱԻՄ հավասարը հավասարին մասնագետի հետ աշխատանքի արդյունքում, հարցվողներից 60-ը նշել է նաև սոցիալական աշխատողի հետ աշխատանքի ազդեցությունը, 10 անձ նշել է

հոգեբանի հետ աշխատանքի մասին, իսկ 23-ը կարևորել են ԻՀԱԿ բժշկի մասնագիտական աջակցությունը:

Աղյուսակ 5



Շահառուների հետ հարցաթերթիկների լրացումը իրականացրել են ԻԱԻՄ ՀԿ-ի աշխատակիցները, իսկ ուսումնասիրության աշխատանքները ամփոփել են՝ Ժ. Մայիլյանը, Ա. Թերգյանը, Ն. Սաֆարյանը, Ա. Հարությունյանը:

Առաջարկներ՝ ուղղված ՀՀ Առողջապահության նախարարությանը, ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնին, Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ-ին:

1. Բարելավել բժիշկ - շահառու հաղորդակցությունը՝ ներդնելով և կարգավորելով հետազոտությունների ուղղորդման, իրականացման, և դրանց ժամկետների հետևողական պահպանման մեխանիզմներ:
2. Մշակել բժշկական խորհրդատվության, սոցիալ-հոգեբանական, աջակցության տրամադրման ընթացակարգ (ծևաթուղթ), որը կներառի ՄԻԱԿ-ով ապրող անձանց բուժման կարևորության, դրա նշանակության և հիվանդության ընթացքի վերաբերյալ հարցեր:
3. Ներդնել և կիրառել ՄԻԱԿ-դրական կարգավիճակի ախտորոշման, ինչպես նաև ՀՌՎ դեղերի անկանոն խմելու կամ դադարի դեպքում հավասարը՝ հավասարին խորհրդատուին, հոգեբանին և ըստ անհրաժեշտության հոգեբույժին պարտադիր ուղղորդման մեխանիզմ: Միաժամանակ, քայլեր

ձեռնարկել նման դեպքերում շահառուներին ապահովելու սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ ուշադրություն դարձնելով վերջիններիս հոգեկան առողջության հետ կապված հարցերին:

4. Ապահովել ՄԻԱՎ ծառայությունների աշխարհագրական հասանելիությունը՝ ներառյալ ՄԻԱՎ-ի հետազոտման, ախտորոշման և բուժման, բազմամասնագիտական աջակցության ծառայությունները:
5. Ստեղծել և տարածել ՄԻԱՎ-ի, դրա կանխարգելման և բուժման կարևորության վերաբերյալ տեղեկատվական կյութեր, իրազեկող հոլովակներ՝ կիրառելով նորարական տեխնոլոգիաներ:
6. Մշակել ՄԻԱՎ-ի բուժման և ՀՌՎ դեղերի տրամադրման ճկուն բազա՝ կիրառելով նորարական տեխնոլոգիաներ:
7. Մշակել շահառուների կյանքի պատմություններ՝ անդրադառնալով ՀՌՎ դեղերի անկանոն խմելու կամ դադարի դեպքերին և շեշտադրելով բուժման վերասկսման կարևորությունը:
8. Կանոնավոր կազմակերպել և իրականացնել փոխօգնության խմբեր - “կենդանի գրադարան” դեղերը չընդունած շահառուներին՝ շեշտադրելով բուժման վերասկսման կարևորությունը:
9. ՀՀ-ում ձեռք բերել երկարաժամկետ ազդեցության դեղեր: